



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2015թ.

N 62 -Ա

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը ***ո ր ո շ ու մ է***:

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015թվականի մայիսի 3-ի հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման հետ կապված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական հանձնաժողովների ծախսերի նախահաշիվը՝ 89 178 200 (ութսուն ինը միլիոն հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով՝ համաձայն N1 հավելվածի:

2. Համապատասխան ընտրական հանձնաժողովների նախագահներին՝ սույն որոշմամբ ընտրությունների համար նախատեսված միջոցներն օգտագործել կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած նախահաշիվներին համապատասխան:

3. Համապատասխան ընտրական հանձնաժողովների նախագահներին՝ ընտրություններից հետո, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում վերադաս ընտրական հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 1
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 կենտրոնական ընտրական հանձնաժողովի
 2015 թվականի մարտի 20 -ի
 N 62- Ա որոշման

ՆԱԽԱՀԱՇԻՎ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱՑ
 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ**

Հ/Հ	Ընտրական հանձնաժողովների անվանումը	Ծախսերը (ՀՀ դրամ)
1	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով (հավելված N1/1)	21 490 200
2	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/2)	9 365 000
3	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/3)	7 410 000
4	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/4)	8 554 000
5	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/5)	16 663 000
6	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/6)	9 348 000
7	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/7)	16 168 000
8	Երևանի տեղամասային ընտրական հանձնաժողով (հավելված N1/8)	180 000
	Ընդամենը	89 178 200

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ